ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՀՆ Գրուպ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/26-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ3 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
8	Երևան Տեքստիլ	Երևան Տեքստիլ	Երևան Տեքստիլ ՍՊԸ	Կոստյում՝ կիսաբրդյա, ամենօրյա Համազգեստը բաղկացած է բաճկոնից և տաբատից: Արտադրվում է մուգ կանաչավուն երանգի «Ռիպստոպ» տեսակի, 235 գրամ / մ2 մակերեսային խտությամբ, 44% բուրդ, 54% պոլիէսթեր և 2% լայկրա բաղադրությամբ գործվածքից: Գործվացքի բաղադրությունը՝ համաձայն ԳՈՍՏ 4659-79, ԻՍՕ 1833-2001, մակերեսային խտությունը՝ համաձայն ԳՈՍՏ 3811-72, ներկի կայունությունը՝ լվացման,թորած ջրի, քրտնքի և չոր շփման նկատմամբ, համաձայն ԳՈՍՏ 9733-83, նվազագույնը 4 բալ : Բաճկոն: Բաճկոնը՝ միալանջ, թիկունքամասը՝ ծավալուն, կոճկվում է կենտրոնական շղթայական կոճկվածքով՝ մեկկողմանի կամ երկկողմանի կայծակ շղթայով (№ 5 կամ № 6): Կենտրոնական շղթայի վրայից երկայնակի 5.5-6.0 սմ լայնության փակ կափույրով, որը կայծակ շղթաի վրայից

				գաղտնի կոճկվածքով կոճկվում է 5 հատ մետաղական կոճգամներով: Ուսադիրների շրջանում մշակվում են երեք փակօղակներ և երկու կամրջակներ ուսադիրների ամրացման համար: Բաճկոնը ամբողջ երկայնքով և տաբատը մշակվում են մուգ կանաչավուն գույնի 70 գ/մ2 100% վիսկոզա աստառով: Բաճկոնի օձիքը ծալովի, օձիքի անկյունային եզրերը կլորավուն: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Առաջամասում կրծքամասի վրա ձախ և աջ մասերում մշակված են կափույրներով, վրադիր ծավալուն 14.5-15.0 սմ լայնության և 16-17 սմ երկարության երկու գրպաններ, որոնց 5.0-5.5 սմ լայնության կափույրները կրծքամասի երկարությամբ ամբողջական են կոճկվում են 2.5×2.5 սմ չափսի կանաչ երանգի կպչուն ժապավեններով, իսկ գրպանների կողերը դեպի կենտրոնական շղթա գաղտնի ներկարված են կանաչ երանգի պլաստմասե կայծակ շղթայով (№ 5): Փեշերի ձախ և աջ մասերում մշակված են վերին մասերը դեպի ներս թեքված ներկարված, 20.0-21.5 սմ բացվածքով, 1.5-2.0 սմ լայնության շերտիկով գրպաններ, որոնք կոճկվում են կանաչ երանգի պլաստմասե կայծակ շղթայով: Բաճկոնի ներսից ձախ կրծքամասի հատվածում մշակված է ծոցագրպան: Բաճկոնի կողամասերում՝ ներքևի գրպաներին զուգահեռ բարձրության վրա, մշակվում են երկու կոճակով կողմասերի չափսը կարգավորվող պատաներ: Կրծքամասի աջ և ձախ գրպանների կափույրների վրա՝ գրպանների լայնությանը համաչափ, մշակվում է 2.5×12.5 սմ չափսի մուգ կանաչ երանգի կպչուն ժապավեններ ՛՛ՀՀ ԱԱԾ՛՛ և ՛՛արյան կարգ՛՛

				կրծքանշանների փակցման համար: Թևքերի վրա ուսակարից 8.5-9.0 սմ ներքև մշակված են 19-20 սմ երկարության և 13-13.5 սմ լայնության վրադիր երկայնակի գրպաններ, որոնք կոճկվում են դեպի կենտրոնական շղթա ներկարված կանաչ երանգի պլաստմասե գաղտնի կայծակ շղթայով (№ 5): Աջ թևքի վրա մշակվում է սեպաձև տեսքով 7.0x9.0 սմ չափսի ասեղնագործ ՛՛ԱԱԾ խորհրդանշանը՛՛ ՝ դրոշը համապատասխան (եռագույն) գունավորմամբ, ձախ թևքի վրա մշակվում է սեպաձև տեսքով 7.0x9.0 սմ չափսի ասեղնագործ ՛՛ՀՀ զինանշանը՛՛ , վահանը համապատասխան (եռագույն) գունավորմամբ : Թևքերի ներքևի եզրերը վերջանում են 6,5-7,5սմ լայնքով մանժետով, որոնք կոճկվում են կոճգամներով: Ասեղնագործ ինքնակպչուններով գրվածքների, թևքանշանների նմուշները կտրամադրվեն ՊՍ-ի կողմից, համազգեստի նմուշի հաստատումից հետո՝ հինգօրյա ժամկետում: Տաբատ: Ազատաթող տաբատը բաղկացած է առաջամասից, հետևամասից և գոտուց: Առաջամասը՝ կողային գրպաններով է, գրպանների միջուկը՝ երեսացու կտորից է: Աջ հետնամասում կտրված գրպան՝ կափույրով՝ 5.5-6.0 սմ լայնության, որը կոճկվում է կոճակով և օղակով: Գուլֆիկը մշակվում է նեյլոնե կայծակ շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ հատ 18մմ կոճակով: Գոտին 4.5-4,7 սմ լայնությամբ, վրան մշակված են 7 կամ 8 հատ 4,5 սմ լայնքով գոտի անցկացնելու համար կամրջակներ: Կողային կարերում անցկացվում է 1.8-2.0 մմ լայնության 2481/2581 ԻԱ արտիկուլի կամ համարժեք

				կապույտ կամ կանաչ գույնի մահուդից երիզներ: Առաջամասում՝ մինչև ծնկների նեքին հատվածը, մշակվում է աստառ: Պիտակավորումը: Բաճկոնի ծոցագրպանին և տաբատի գոտու ներսի մասին կարված են պիտակներ: Պիտակի վրա նշված՝ տեսականու չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը և պայմանագրի կոդը, խնամքի վերաբերյալ սիմվոլներ և գրվածքներ: Բաճկոնի կենտրոնական շղթայի շնիկի վրա կախված է չափս-հասակի ստուգիչ պիտակ՝ վրան նշված՝ տեսականու չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը և պայմանագրի կոդը: Փաթեթավորումը՝ առնվազն եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ 1 հատ: Արկղերը պիտակավորված կամ տպագրված, որի վրա նշված է տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումը, արտադրման տարեթիվը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ""ХН ГРУП"" в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/26-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ3 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
8				